ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՆԱԽԿԻՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները,

հաշվի առնելով խորը փոփոխությունները, որոնք հանգեցրել են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, որպես միջազգային իրավունքի պետություն-սուբյեկտի եւ աշխարհաքաղաքական իրողության գոյության դադարեցմանը,

նշելով, որ նախկին ԽՍՀ Միության գույքի հետ կապված հարցերը արտասահմանում պահանջում են հատուկ կարգավորում, ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցությունը ստեղծելու մասՍջֆ 1991 թվականի դեկտեմբերի 8-ին Մինսկում ստորագրված Համաձայնագրի եւ 1991 թվականի դեկտեմբերի 21-ին Ալմա Աթա քաղաքում ստորագրված Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրի եւ Արձանագրության նպատակներով ու սկզբունքներով, ուշադրության առնելով Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին Համաձայնագրի 12-րդ հոդվածը, որտեղ Համագործակցության պետությունները երաշխավորում են նախկին ԽՍՀ Միության պայմանագրերից եւ համաձայնագրերից իրենց համար բխող միջազգային պարտավորությունների կատարումը, հաստատելով Համագործակցության պետությունների համախոհությունը փոխշահավետ համագործակցության զարգացմանը եւ կառուցվածքային ոգով բոլոր հարցերի լուծմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

1. Համագործակցության մասնակից պետությունները փոխադարձաբար ընդունում են, որ նրանցից յուրաքանչյուրը նախկին ԽՍՀ Միության արտասահմանի սեփականության մեջ համապատասխան նշված արդարացի բաժնի իրավունք ունի, եւ կնպաստեն այդ իրավունքի իրագործմանը:

2. Ստեղծել միջպետական հանձնաժողով՝ արտասահմանում նախկին ԽՍՀ Միության ամբողջ սեփականության բաշխման վերաբերյալ չափանիշներ եւ սկզբունքներ մշակելու համար:

Կատարված է Մինսկ քաղաքում 1991 թվականի դեկտեմբերի 30-ին, մեկ բնօրինակով, Համաձայնագրի մասնակից պետությունների պետական լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Բնօրինակը ի պահ է տրվում Բելառուսի Հանրապետության Կառավարությանը, որը սույն Համաձայնագրի մասնակից պետություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 30-ից: